

Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

ՀՈԳԵՎԵՐԼՈՒԹՈՒՄ.— Գրեց ՏՕՔԹ. Ամատեանը. 1926 Բէյրութ:

Շնորհաւորելի է Տօքթ. Ամատեանը, որ ձեռնարկած է այս յոյժ շահեկան, կրթիչ և ընթացիկ տեսութիւնը ներկայացնելու, այն ալ յստակ ու գրաւիչ եղանակով: Հեղինակը սպառած է հոգեվերլուծութի մասին Ս. Ֆրոյտի քարոզած գաղափարներն ու անոնց գործնական կիրառութիւնները, այնուամենայնիւ տուած է համասեռականութեան ախոյեանին հիմնական միտքերը: Կը հանդիպիք յաճաղէպ կրկնութիւններու, որոնք ըստ իս, չեն վնասեր նիւթին: Ընդհակառակը յիշողութիւնը կը թարմացնեն, տպաւորութիւնը կը խորացնեն կեդրոնացնելով ուշադրութիւնը:

Որդեգրուած Կեղնաբանական մէթոտը շատ պատշաճ է ու նպատակայարմար: Հեղինակը իր միտքերը կը գարգացնէ մշտական հետեւողականութեամբ. կը մեկնի պարզէն և կ'աւարտէ բարդ հարցերու պարզաբանութեամբ: Նկատելի է, որ հեղինակը կը շփոթէ անգիտակցականը ենթագիտակցականի հետ: Ի հարկէ, այս մեծ սխալ մըն է:

Գրքին վերջը՝ հոգեվերլուծութի մասին քանի մը դրքերուցանկը դրուած է: Շահեկան է կարգալ Օտտօ Վայնինգէրը «Սեռ ու Նկարագիր» գիրքը, որմէ յայտնապէս ազդուած է Ֆրոյտը, ինչպէս Շթէնկէլի երկերը, որոնք լաւագոյն մեկնիչներն են Ֆրոյտիզմի, ինչպէս հիմնադիրը ինքն իսկ կ'ընդունի: Բժ. ԵՐ. Խ.

ՋԵՐՄԱՄԻՋՈՒԹԻՒՆ.— գրեց ՏՕՔԹ. Յ. Մանուկեան. Սօֆիա, 6 էջ:

Հարց ու պատասխանի ձևով ներկայացուած է այս ախտը: Ոչ միայն նիւթը չափազանց խտացուած է ու անբաւարար և կան անհարկի և վիճելի փաստեր Ս. Գրքէն մէջբերուած, ալ և սխալ վճիռներ, որոնք կրնան անհաճոյ դէպքերու դուռ բանալ նոյնիսկ իրեն՝ հեղինակին համար:

«Շթէ ժամանակին բժիշկին դիմենք, լաւ դարմանումով մը 10-15 օրէն կրնայ բուժուիլ»: Թոյլ տուէք որ իմ ուժգին կասկածս յայտնեմ:

Հիւանդներ յաճախ կ'ըսեն. «Չերմամիզութիւն ունեցայ, և 15 օրէն անցաւ առանց դեղի» և կը շարունակեն նկարագրել Չերմամիզութեան նշանները: Պարտք կը համարեմ շեշտել, որ շատ ուրիշ միզանցքային բորբոքումներ կան, որ Չերմամիզութեան նշանները կուտան և սակայն անոնց մէջ Չերմամիզութեան ման-

րէ չկայ: Եւ կամ հոսուսի դադրումով հիւանդը ինքզինքը բուժուած կը համարէ: Երբ դարմանումը սկսուի հիւանդութեան առաջին ժամերուն, կարելի է քանի մը օրուան մէջ խափանել, այն ալ հազուադէպ պարագաներու մէջ: Սխալ է ուրեմն հաղուադէպ պարագաներ ընդհանրացնել և բսել թէ ջերմամիզութիւնը 10-15 օրէն կրնայ բուժուիլ, մինչ իրականին մէջ առնուազն մէկ ու կէս ամսուան կը կարօտի անոր դարմանումը, եթէ ոչ աւելի:

Կ'արժէ որ «Բուժանք» մանրամասնօրէն անդրադառնար այս հարցին.

ԲԺ. ԵՐ. Խ.

* *

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ, գրեց Տօքթ. Արթօ Ն. Մեզպուրեան 174 էջ. Բ. տպագր. Պոլիս:

Տօքթ. Մեզպուրեանի աշխատանքը աւելի լայն բովանդակութիւն ունի քան կ'արտայայտէ վերնագիրը: Առանց շեղուելու իր հիմնական նիւթէն, 49 էջ նուիրած է մօր առողջապահութեան ուր առանձնապէս շեշտուած են ծննդաբերութիւնէ առաջ, յղութեան շրջանին և ներարգանդային մանկատանութեան հիմնական կէտերը և անոնց կարեւորութիւնը:

Բուն մանուկներու առողջապահութեան նուիրած է աշխատութեան մնացած մասը:— Սկսելով ծննդեան օրւայ յատուկ անմիջական խնամքներէն, հետեւելով մանուկի զարգացման օրէ օր, տմսէ ամիս, հասցուցած է փոքրիկը մինչև 6-15 տարեկանը, թէեւ այս վերջին մասը շատ համառօտ և թերի:

Տօքթ. Մեզպուրեանի աշխատութեան առակելութիւններն են նիւթի ճոխութեւնը, սահուն և պարզ լեզուն, գրելու շնորհք մը, որ հաճելի կը դարձնէ գրքին ծայրէ ծայր ընթերցումը առանց յոգնութեան, հակառակ միջանկեալ շատ մը թիւերու և աղիւսակներու: Ճոխ տպադրութիւն մը՝ զարդարուած բազմաթիւ պատկերներով որոնց ընտրութեան մէջ յարգելի յեղինակը պէտք էր աւելի խստապահանջ ըլլար:

Ջարմանալի չէ որ Տօքթ. Մեզպուրեանի աշխատութիւնը արժանացած է երկրորդ տպագրութեան: Վստահ ենք որ պիտի ունենայ նոր տպագրութիւններ որոնց ընթացքին անշուշտ անոր բովանդակութեան վրայ պիտի աւելացուի նորածինի և մանուկի ընթացիկ հիւանդութիւններու նուիրուած գլուխ մը, լրացնելու համար կարեւոր պակաս մը: Ջերմապէս կը յանձնարարենք այս գրքին ընթերցումը:

ԲԺ. ԵՐ. Մ.